

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Պրոդուկտի անվանում - ԿՐԵԴՈ ՎԵՑԱՊԱՏԻԿ 2

Այս վարկադրեսակը նախատեսված է Կրեդո Ֆինանս ՈՒՎԿ ՓԲԸ-ում 1 վարկ ամբողջովին և առանց ուշացումների մարած հաճախորդների համար, որոնց վարկը սպասարկվել է առնվազն 6 ամիս:

| | | |
|---|---|--|
| 1 | Ընդհանուր նկարագրություն | |
| 1.1 Նպատակ | Վարկավորում սպառողական նպատակով | |
| 1.2 Նպատակային խումբ | Անկանխիկ աշխատավարձ ստացող ՀՀ ռեզիդենտ ֆիզ անձիք Տարիք 21 - 70 Առկա է մշտական գրանցում Նվազագույն անընդհատ աշխատանքային ստաժ 6 ամիս | |
| 2 | Պրոդուկտի չափանիշներ | |
| 2.1 Ֆինանսավորման տեսակ | Վարկ պարբերական մարումներով | |
| 2.2 Տրամադրում | Միանվագ | |
| 2.3 Տրամադրման եղանակ | Կանխիկ | |
| 2.4 Արժույթ | ՀՀԴ | |
| 2.5 Նվազագույն գումար | 100 000 | |
| 2.6 Առավելագույն գումար | Ամսական համախառն եկամտի վեցապատիկ, սակայն ոչ ավել քան 1 500 000 | |
| 2.7 Տարեկան տոկոսադրույք | 17.9%* | |
| 2.8 Տարեկան փաստացի տոկոսադրույք | 47.2-154.28%** | |
| 2.9 Նվազագույն ժամկետ | 0 ամիս | |
| 2.10 Առավելագույն ժամկետ | 60 ամիս | |
| 2.11 Մարման տեսակ | Անուփոփոխ վճարումներ | |
| 2.12 Մարման պարբերականություն | Ամսական | |
| 2.13 Ձևակերպման վճար | 3.3% տրամադրված վարկի գումարից միանվագ վճար | |
| 2.14 Կանխիկ միջոցների տրամադրման միանվագ վճար | 1.9% տրամադրված վարկի գումարից միանվագ վճար | |
| 2.15 Հաշվի սպասարկման ամսական վճար | 1.1 % վարկի տրամադրված գումարից | |
| 2.16 Հավելյալ ծառայություններ/ակտիվացման վճար | Առկա են հետևյալ ծառայությունները*** - Մարման նվազեցում/5% վարկի մնացորդից միանվագ վճար - Մարման բացթողում/5% վարկի մնացորդից միանվագ վճար - Մարման ամսաթվի փոփոխություն/անվճար | |
| 3 | Պահանջվող փաստաթղթեր | |
| 3.1 Փաստաթղթերի ցանկ | - Անձնագիր (փախստականի տեղեկանք,զին գործույկ, կացության քարտ,հատուկ անձնագիր)/ID քարտ - Սոցիալական քարտ ՀՀ քաղաքացու համար (տեղեկանք սոց քարտի բացակայության մասին) - Անձը հաստատող վկայական կամ աշխատավարձի մասին տեղեկանք /միայն ուժային կառույցների աշխատակիցների համար/ - Կարող է պահանջվել եկամտի տեղեկանք(վերջին վեց ամսվա բանկային հաշվի քաղվածք, եկամուտը բանկային հաշվով ստանալու դեպքում,աշխատավարձի տեղեկանք,շահաբաժնի ստացման տեղեկանք,հարկային հաշվետվություն,վարձակալության պայմանագիր, սեփականության վկայական,այլ) | |
| 4 | Այլ պայմաններ | |
| 4.1 Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը և ձևակերպան վայրը | 15 րոպե Վարկը ձևակերպվում է մասնաճյուղերում | |
| 4.2 Վարկ տրամադրելու դրական որոշման գործոնները | -Փաստաթղթային ամբողջական փաթեթի առկայություն -Վարկի սպասարկման համար անհրաժեշտ եկամուտներ -Դրական կամ չեզոք վարկային պատմություն | |
| 5 | Վարկային պարտականությունների խախտման դեպքեր | |
| 5.1 կիրառվող տուգանային տոկոս /յուրաքանչյուր ժամկետանց օրացույցային օրվա համար/ | Վարկառուի պարտականությունների խախտման դեպքում | 0.13% ժամկետանց գումարից և հաշվարկված տոկոսներից**** |

* **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Տոկոսադրույքը վարկային պայմանագրի գործողության ընթացքում կարող է փոփոխվել**, եթե 4 ամիս և ավել առանց ուշացման, համաձայն վճարման ժամանակացույցի մարում կատարվի: Տարեկան անվանական տոկոսադրույքի իջեցումը կատարվելու է քառամսյակը հաջորդող ամսվա մինչև 15-ը 1 տոկոսի չափով:

Տոկոսագումարի հաշվարկման կարգ

Վարկի գծով տոկոսագումարը հաշվարկվում է Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

** **Ուշադրություն՝**

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, վարկի նվազող մնացորդի նկատմամբ: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս վարկի իրական արժեքը հաճախորդի համար, մարման գրաֆիկին համապատասխան վճարումները կատարելու պարագայում, ներառյալ բոլոր այն հավելյալ ծախսերը և միջնորդավճարները, որոնք կատարվում են հաճախորդի կողմից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին

տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn - կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն

ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած

ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

*** **Մարման նվազեցում**

-Ամսական մարման նվազեցում ի հաշիվ վարկի ժամկետի երկարացման

Մարման բացթողում

-Մոտակա վճարման գրոացում ի հաշիվ վարկի ժամկետի երկարացման

- գրոյացվում է միայն մոտակա վճարումը, հետագա վճարումները կատարվում են համաձայն գրաֆիկի

- վարկի այլ պայմաններ, բացի ժամկետից, չեն փոփոխվում

Մարման ամսաթվի փոփոխություն

- Մարման ամսաթվի փոփոխություն առաջիկա բոլոր վճարումների համար

- ծառայությունը չի կարող ակտիվացվել ամսվա առաջին և վերջին երեք օրվա ընթացքում

- ծառայությունը կարելի է ակտիվացնել վճարումից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ

Ծառայությունները հասանելի են այն հաճախորդներին, որոնք չունեն ժամկետանց (մեկ անգամ, 12 ամսվա ընթացքում)

*** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:**

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ:

Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

Վարկը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:

Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05:Ընդ որում ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում կրեդիտավորման ընդհանուր ծախսը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ և նվազեցվում է սպասարկման վճար, տոկոս և մայր գումար հաջորդականությամբ: